

Մարտ 25, 1980
Շիզակո

Գերաշնորհ
Տ.Թորգոմ Ս.Արքեպիսկոպոս Մանուկեան
Բարեխնամ Առաջնորդ Հայոց Ամերիկայի
Նիւ Եորք


Սրբազան Հայր,

Շիզակոյի Հայոց Ս.Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ
Տարեկան ծխական ժողովը տեղի ունեցաւ Կիրակի, Փետրուար
17, 1980 եւ օրինաւոր նիւստին կատարուեցաւ ծխական
խորհուրդիս դադարեալ անդամներուն տեղ նոր անդամներու
ընտրութիւնը եւ ներկայացնելով անոնց անունները քուէից
առաւելագոյն կարգով խոնարհաբար կը խնդրենք Ձերդ բարձր
վաւերացումն ու օրհնութիւնը, հրաւիրելու նորընտրեալ
անդամները ծխական խորհուրդիս անդամագրութեան:

Հաճեցէք մերփակ ստանալ Առաջնորդարանիդ հարցարանը,
ծխական խորհուրդիս 1979 տարեշրջանի նիւթա-բարոյական
տեղեկատուութիւնը ինչպէս նաեւ մեր զեկոյցը, Անգլիերէն
լեզուով:

Վստահելով Ձերդ Հայրական վաւերացման եւ օրհնութեան
մնամ ի համբոյր Ձեր Ս.Աջոյն

Կարօ Սագեան 40 Քուէ
Նշան Պապիկեան 35 Քուէ
Րոպերթ Գալուստեան 31 Քուէ
Կարօ Էվրան 24 Քուէ
Յաջորդ առաւելագոյն քուէն ստացաւ
Արսէն ճրբեան 28 քուէ

Խոնարհ որդիդ՝

Հ.Թորայր Վրդ. Թաշճեան